

Հավելված
ՀՀ վարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 7 -ի N 1326 - Լ
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՄՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ «ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆՈՒՄ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ «ԿՈՊԵՐՆԻԿՈՒՍ» ՀԱՄԱԿԱՐԳՈՎ»
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԵՎ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳ)
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (այսուհետև՝ տեսչական մարմին) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշման հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում ապահովում է դիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բնական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

Ելնելով վերոգրյալից՝ 2020 թվականի փետրվարի 21-ին Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամի (դեկավար/շահառու) և տեսչական մարմնի (շահառու) միջև ստորագրվել է գործընկերության համաձայնագիր՝ «Սևծովյան ավազան - 2014-2020» համատեղ գործառնական ծրագիր» իրականացնելու մասին: Համաձայն գործընկերության համաձայնագրի՝ դեկավար/շահառուի և շահառուի կողմից իրականացվելու է «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկոս» համակարգով» ծրագիրը (հակիրճ անվանումը՝ «ՊՈՆՏՈՍ»):

Ծրագրի նպատակն է ամրապնդել անդրսահմանային համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանի երկրներում և նրա սահմաններից դուրս՝ լայնածավալ, ներդաշնակ բնապահպանական ուսումնասիրություն (մոնիտորինգ) իրականացնելու համար: Ծրագիրը կօգտագործի «Կուպերնիկոս» համակարգի տվյալներն ու ծառայությունները, կստեղծի առցանց ծառայությունների հարթակ, որը անվճար հասանելի կլինի մի շարք տեղական, ազգային և տարածաշրջանային շահառուների համար:

Հաշվի առնելով տարածաշրջանային մարտահրավերները՝ «Կուպերնիկոս» համակարգի տվյալների ու ծառայությունների կիրառմամբ կիրականացվեն թվային քարտեզագրում, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն և վերլուծություն՝ ընդգրկելով ծովային ու լճային ափամերձ և ցամաքային տարածքները և թիրախավորելով արդյունաբերական, հանգստի, գյուղատնտեսության, ջրային տնտեսության և առևտրի գործունեության ոլորտները Հայաստանում, Վրաստանում, Ուկրաինայում և Հունաստանում:

Ծրագրի շրջանակներում հաշվարկվելու են Սև ծովի կամ շրջակա լճերի վրա (Հայաստանում՝ Սևանա լիճ և ջրհավաք ավազան) ազդեցությունները վերոգրյալ գործունեության ոլորտների կողմից, միևնույն ժամանակ արբանյակային և դաշտային տվյալների միջոցով ուսումնասիրվելու են այնպիսի պարամետրերի տատանումները, ինչպիսիք են ծովի/լճի ջրի մակերեսային ջերմաստիճանը, անտառածածկույթի փոփոխությունները, աղիությունը, օրգանական նյութերը, պոտենցիալ թունավոր տարրերը, ջրիմուռների առկայությունը և այլն:

Ծրագրի ազդեցությունը կգնահատվի սահմանված ելակետային պայմանների համաձայն: Տեղական շահառուները և դերակատարները (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական և մասնավոր կազմակերպություններ, կրթական հաստատությունների ներկայացուցիչներ, գիտական հետազոտողներ, ոլորտային մասնագետներ և այլն) կտեղեկացվեն ու կապահովվեն համապատասխան ինտերֆեյսով՝

«ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակի տեղեկատվությանը և կանոնավոր թարմացումներին հասանելիություն ունենալու նպատակով: Կարողությունների զարգացման գործողությունների միջոցով «ՊՈՆՏՈՍ» հարթակը նպատակ ունի առաջարկել միջոցներ գործնականում օգտագործելու առկա տեղական մոնիտորինգի ցանցերը և «Կուպերնիկոս»-ի տվյալներն ու ծառայությունները՝ դրա օնլայն ծառայությունները համապատասխանեցնելով առկա սարքավորումներին և ծրագրային ենթակառուցվածքներին, ինչպես նաև նպաստել տարածաշրջանում համագործակցությանը, գաղափարների ու լավագույն փորձի փոխանակմանը:

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 374-Ն որոշմամբ՝ մշակվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020-2022 թվականների «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կուպերնիկոս» համակարգով» ծրագրի շրջանակներում Սևանա լճի և ջրհավաք ավազանի բնապահպանական ուսումնասիրության (մոնիտորինգի) իրականացման աշխատանքների կազմակերպման ծրագիրը, որն իրականացվելու է 2020-2022 թվականների ընթացքում՝ 30 ամիս տևողությամբ:

Ծրագրի ընդհանուր իրավասու ծախսը գնահատվել է 120,000 եվրո (հարյուր քսան հազար):

Ծրագրի ընթացքում դեկավար/շահառուի կողմից շահառուին վճարվելիք ընդհանուր դրամաշնորհը կազմում է 110,400 եվրո (հարյուր տասը հազար չորս հարյուր):

Շահառուն ծրագրի իրականացման համար համաֆինանսավորելու է 9,600 եվրո (ինը հազար վեց հարյուր) գումարի չափով՝ ՀՀ պետական բյուջեով հաստատված, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին հատկացված միջոցներից:

Գործընկերության համաձայնագրի համաձայն՝ տեսչական մարմնի գործող կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողները (12 հաստիքային միավոր), որոնք իրականացնելու են «ՊՈՆՏՈՍ»-ով նախատեսված աշխատանքները, պետք է ունենան ծրագրի հետ առնչվող իրավական ակտերի իմացություն, տրամաբանելու,

տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, մասնավորապես՝ տեղեկատվության հավաքագրման, գնահատման և վերլուծելու ունակություն, հաշվետվությունների մշակում, ծանոթ լինեն ծրագրին առնչվող անհրաժեշտ իրավական ակտերին և տեղեկատվությանը:

Ծրագիրն իրականացնող ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների աշխատանքային ծրագրերը կազմվելու են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման:

Ծրագրի ընթացքում քաղաքացիական ծառայողների վարձատրությունը կատարվելու է (բացի ՀՀ պետական բյուջեի միջոցներից իրենց հիմնական աշխատավարձի հաշվարկումից)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 374-Ն որոշման և ծրագրով նախատեսված պարբերականությամբ օպտիմալացված միջոցներից պարգևատրումներով՝ հիմք ընդունելով նրանց՝ ըստ ծրագրի կատարողականի գնահատման արդյունքները:

ԲԱԺԻՆ 1

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ

NN ը/կ	Նպատակները	Թիրախները
1	2	3
1.	Սևծովյան երկրների միջև տեխնոլոգիաների և փորձի փոխանակում	<p>1.1. «ՊՈՆՏՈՍ» հարթակի ստեղծմանը մասնակցություն՝ տեխնոլոգիական և տեղեկատվական ենթակառուցվածքների առցանց ծառայությունների ստեղծմամբ և զարգացմամբ:</p> <p>1.2. Գոյություն ունեցող ալգորիթմների, մոդուլների և գործիքների ինտեգրում «ՊՈՆՏՈՍ» հարթակում և ծրագրի գործընկերներին ու շահագրգիռ դերակատարներին «ՊՈՆՏՈՍ» հարթակի հասանելիության ապահովում:</p>
2.	Սևանա լճի և ջրհավաք ավազանի ուսումնասիրության (մոնիտորինգի) իրականացում 2009-2021 թվականների կտրվածքով՝ «Կոպեռնիկոս» համակարգի օգտագործմամբ	<p>1.1. «Կոպեռնիկոս» ծրագրից ստացված տեղեկատվության համադրում տեղական գիտելիքների և տվյալների հետ՝ տեղական կարողությունների հզորացման նպատակով:</p> <p>1.2. Քանակական ճշգրիտ արդյունքների համար պահանջվող իրական չափումների և գործընթացների իրականացման ապահովում՝ հիմնված հատուկ փորձնական ուսումնասիրությունների, դաշտային աշխատանքների և վերլուծությունների վրա:</p> <p>1.3. Սևանա լճի և ջրհավաք ավազանի տարածքներում Երկրի դիտարկման էկոհամակարգի ուսումնասիրության (մոնիտորինգի) տվյալների կիրառում շրջակա միջավայրի փոփոխությունների և դրա հետևանքների գնահատման գործընթացում՝ հասանելի և իրատեսական վերլուծական արդյունքներ ստանալու նպատակով:</p>
3.	Տեղական և տարածաշրջանային դերակատարների ներգրավում տարբեր մակարդակներում՝ որպես «ՊՈՆՏՈՍ» հարթակի շահառուներ	<p>1.1. Տարածաշրջանում ծրագրի ազդեցության առավելագույն ընդլայնում բազմակողմանի մոտեցումներով: Տեղական և տարածաշրջանային դերակատարներին «ՊՈՆՏՈՍ» ծրագրի ձևավորման լուծումներում ներգրավում:</p> <p>1.2. Թիրախավորված հաղորդակցության ռազմավարության մշակում, որը կնպաստի «ՊՈՆՏՈՍ»-ի արդյունքների</p>

	փոխանցմանը շահառու կողմերին: Որակի հսկողության նպատակով՝ հաղորդակցության ռազմավարությունը կսահմանի արդյունավետության առանցքային հիմնական ցուցանիշներ (KPI):
--	---

ԲԱԺԻՆ 2

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

NN ը/կ	Հիմնավորումներ
1	2
1.	<p>Սևծովյան երկրների միջև տեխնոլոգիաների և փորձի փոխանակում</p> <p>Այս նպատակի իրականացումը պայմանավորված է բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ Սևծովյան ավազանում և Սևանա լճի և ջրհավաք ավազանում (որպես ազգային և տարածաշրջանային նշանակության քաղցրահամ ջրավազան) 2009-2021 թվականների կտրվածքով տեղի ունեցած էկոհամակարգերի փոփոխությունների, առկա իրավիճակային խնդիրների վերաբերյալ տարածաժամանակային հավաստի տեղեկատվության հասանելիության ապահովմամբ՝ գիտնականներին, ոլորտային մասնագետներին, քաղաքականություն մշակողներին, քաղաքացիներին և այլ շահառու կողմերին:</p>
2.	<p>Սևանա լճի և ջրհավաք ավազանում ուսումնասիրության (մոնիտորինգի) իրականացում 2009-2021 թվականների կտրվածքով՝ «Կոպեռնիկոս» համակարգի օգտագործմամբ:</p> <p>Այս նպատակի իրականացումը պայմանավորված է Սևանա լճի և ջրհավաք ավազանի հետ կապված բազմաթիվ հիմնախնդիրների հետ, որոնց տարածաժամանակային ուսումնասիրության, գնահատման և վերլուծության համար կիրառվելու են «Կոպեռնիկոս» համակարգի կողմից տրամադրված արբանյակային տվյալները՝ տեղական առկա տվյալների հետ համադրմամբ: Այդ տվյալների միջոցով 2009-2021 թվականների կտրվածքով ուսումնասիրվելու են այնպիսի պարամետրերի տատանումները, ինչպիսիք են լճի ջրի մակերեսային ջերմաստիճանը, աղիությունը, օրգանական նյութերը, պոտենցիալ թունավոր տարրերը, ջրիմուռների առկայությունը և այլն:</p>
3.	<p>Տեղական և տարածաշրջանային դերակատարների ներգրավում տարբեր մակարդակներում՝ որպես «ՊՈՆՏՈՍ» հարթակի շահառուներ:</p> <p>Այս նպատակի իրականացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ որևէ տարածաժամանակային ուսումնասիրության, գնահատման և վերլուծության հարթակի բացակայությամբ: «ՊՈՆՏՈՍ» հարթակի ստեղծումը և բազմակողմանի մոտեցումներով ազդեցության առավելագույն ընդլայնումը, կընձեռի հնարավորություն տեղական և տարածաշրջանային դերակատարներին ներգրավվելու «ՊՈՆՏՈՍ» հարթակի ձևավորման լուծումների գործընթացում:</p>

ԲԱԺԻՆ 3

ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ծրագրի իրականացման եղանակները)

Ռազմավարական նպատակները	Խնդիրները	2020-2022 թթ. հիմնական գործողությունները և (կամ) միջոցառումները	Ժամկետը		Հիմնական միջոցառումների և (կամ) գործողությունների համար կանխատեսվող ծախսերը	Պատասխանատուն
1	2	3	4		5	6
1. Սևծովյան երկրների միջև տեխնոլոգիաների և փորձի փոխանակում	1.1 Կարողությունների զարգացում	1. Դասընթացավարերի, մասնագետների, երիտասարդ գիտնականների և պրակտիկանտների ուսուցում և վերապատրաստում, որն իրականացվելու է երեք փուլով և ներգրավված են լինելու «ՊՈՆՏՈՍ»-ի բոլոր գործընկերները: Դասընթացների թեմաները կվերաբերեն արբանյակային համակարգերի միջոցով Երկիր մոլորակի դիտարկմանը, ԵՄ-ի կողմից իրականացվող մոնիտորինգի արդյունքում ունեցած ձեռքբերումներին,	2021 թ.	2022 թ.	2 562 եվրո	1. Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն 2. Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն 3. Ընդերքի վերահսկողության վարչություն 4. Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն

		«Կոպերնիկոս» համակարգին, «ՊՈՆՏՈՍ» հարթակի ստեղծման մեթոդաբանությանը և գործիքներին:				
2. Սևանա լճի և ջրհավաք ավազանի ուսումնասիրության (մոնիտորինգի) իրականացում 2009-2021 թվականների կտրվածքով՝ «Կոպերնիկոս» համակարգի օգտագործմամբ	2.1 Անտառածածկույթի փոփոխությունների հետ կապված խնդիրներ	1. Իրականացվելու է անտառածածկույթի փոփոխությունների հետևանքների որոշում, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության գնահատում: 2009-2021 թթ. կտրվածքով անտառածածկույթի նոսրացման (հրդեհների, անտառահատումների և այլնի պատճառով) և աճի դինամիկայի ուսումնասիրու- թյան (մոնիտորինգի) իրականացում «ՊՈՆՏՈՍ» հարթակով, որը կօգտագործի «Կոպերնիկոս» համակարգը, NASA-ի և USGS-ի տվյալները, ինչպես նաև ազգային արխիվներն ու մոնիտորինգի ծառայությունները: 2. Կիրականացվի Սևանա լճի և ջրհավաք ավազանի	2021 թ.	90 438 եվրո	1. Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն 2. Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն 3. Ընդերքի վերահսկողության վարչություն 4. Կենսաբազմազանու- թյան վերահսկողության վարչություն	

		<p>արքանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն, վերլուծություն և ազդեցության գնահատում:</p>				
	<p>2.2 Գյուղատնտեսական նպատակով օգտագործվող ջրային հաշվեկշռի, ջրի արտադրողականության ցուցանիշների և ջրի սակավության ինդեքսների հետ կապված խնդիրներ</p>	<p>1. 2009-2021 թթ. կտրվածքով գյուղատնտեսական նպատակով օգտագործվող ջրային հաշվեկշռի գնահատում, ջրի արտադրողականության ցուցանիշների և ջրի սակավության ինդեքսների որոշում, տեղումների և գոլորիշացման տվյալների համադրում և ուսումնասիրության (մոնիտորինգի) իրականացում «Կոպեռնիկոս» համակարգի կողմից տրամադրված արքանյակային պատկերների և այլ տվյալների բազաների միջոցով:</p> <p>2. Կիրականացվի Սևանա լճի և ջրհավաք ավազանի գյուղատնտեսական նպատակով օգտագործվող</p>			<p>2022 թ.</p>	

		<p>ջրային հաշվեկշռի, ջրի արտադրողականության ցուցանիշների և ջրի սակավության ինդեքսների արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն, վերլուծություն և ազդեցության գնահատում:</p>					
	<p>2.3 Ճահիճների և ճահճային բուսածածկույթի փոփոխությունների հետ կապված խնդիրներ</p>	<p>1. 2009-2021 թթ. կտրվածքով ճահիճների մակերեսային ջրերում խոնավության և ճահճային բուսական ծածկույթի փոփոխությունների գնահատում (աճի ինտենսիվություն և այլն), որոնք կապված են օրգանական նյութերի կոնցենտրացիայի հետ. «ՊՈՆՏՈՍ» հարթակը կօգտագործվի ճահիճների և ճահճային բուսածածկույթի փոփոխման դինամիկայի և ջրիմուռների ծաղկման ժամանակահատվածի գնահատման նպատակով:</p>			<p>2022 թ.</p>		

	<p>2. Կիրականացվի Սևանա լճի և ջրհավաք ավազանի ճահիճների և ճահճային բուսածածկույթի փոփոխությունների արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն, վերլուծություն և ազդեցության գնահատում:</p>					
<p>2.4 Քլորոֆիլի և էվտրոֆիկացիայի դինամիկայի հետ կապված խնդիրներ</p>	<p>1. Քլորոֆիլի և էվտրոֆիկացիայի դինամիկայի համապարփակ գնահատում: 2009-2021 թթ. կտրվածքով կմշակվեն արբանյակային պատկերներ քլորոֆիլի կոնցենտրացիայի դինամիկան գնահատելու համար և որպես ջրի էվտրոֆիկացիայի ցուցիչ՝ օրգանական նյութերով ադտոտվածության ուսումնասիրության (մոնիտորինգի) համար:</p>			<p>2022 թ.</p>		
	<p>2. Կիրականացվի Սևանա լճի և ջրհավաք ավազանի քլորոֆիլի և էվտրոֆիկացիայի</p>					

		դինամիկայի արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն, վերլուծություն և ազդեցության գնահատում:					
3. Տեղական և ռեգիոնալ դերակատարների ներգրավում տարբեր մակարդակներում՝ որպես «ՊՈՆՏՈՍ» հարթակի շահառուներ	3.1. Կարիքների գնահատում	1. Սեմինարներ և բաց քննարկումներ շահառուների հետ: Գիտելիքների բացերի վերլուծության ռազմավարության կազմում և կարգավորում, ուսումնական նյութերի, մեթոդական ուղեցույցների մշակում. Ջրային ռեսուրսների կառավարման և աղտոտման կանխարգելման վերաբերյալ տեղական տվյալների բազաների ձևավորմանը մասնակցության ապահովում:	2020 թ.	2021 թ.	2022 թ.	16 200 եվրո	1. Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն 2. Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն 3. Ընդերքի վերահսկողության վարչություն 4. Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն

ԲԱԺԻՆ 4

ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆԸ
(ծրագրի թիրախային ցուցիչները)

Ծրագրային նպատակները և խնդիրները	2020-2022 թթ. ակնկալվող արդյունքները	Թիրախային ցուցիչները և չափման միավորը	Ցուցիչի ստուգման եղանակը և աղբյուրը	Տեղեկատվության հավաքագրման պարբերականությունը	Մեկնարկային արժեքը	2021-2022 թթ. կատարողական թիրախը՝ ըստ կիսամյակների		
						առաջին կիսամյակ	երկրորդ կիսամյակ	տարի
1	2	3	4	5	6	7		
1. Սևծովյան երկրների միջև տեխնոլոգիաների և փորձի փոխանակում	«ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակ և գործիքներ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների վրա հիմնված լրացուցիչ գործիքների հասանելություն	Անվճար, հասանելի առցանց ծառայությունների «ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակից և գործիքներից օգտվողների թվաքանակ	Տարեկան	Առկա չէ	-	-	2021 թ. հասանելի «ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակ և գործիքներ
1.1. Կարողությունների զարգացում	«ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակի կիրառման մեթոդաբանությանը և գործիքներին	Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և մասնավոր կազմակերպությունների, կրթական հաստատությունների	Վերապատրաստված մասնագետների թվաքանակ	Տարեկան	Առկա չէ	-	-	2021 թ. և 2022 թ. հասանելի ուսումնական նյութեր, մեթոդական ուղեցույցներ, վերապատրաստված մասնագետներ

	տիրապետում, ուսումնական նյութերի պատրաստմանը մասնակցություն	ներկայացուցիչների, գիտական հետազոտողների, ոլորտային մասնագետների և այլ շահառուների ուսուցանում և վերապատրաստում, ծրագրի շրջանակներում մշակված ուսումնական նյութերին, մեթոդական ուղեցույցներին հասանելիություն						
2. Սևանա լճի և ջրհավաք ավազանի ուսումնասիրության (մոնիտորինգի) իրականացում 2009-2021 թվականների կտրվածքով՝ «Կոպեռնիկոս» ծրագրի օգտագործմամբ	1) Սևանա լճի և ջրհավաք ավազանի բնապահպանական խնդիրների և ազդեցությունների մասին հավաքագրված արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների համադրում.	Սևծովյան երկրների համագործակցության շրջանակներում «ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակի ծրագրային աջակցության կիրառմամբ կրթության, հետազոտության և զարգացման ոլորտներում շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալների փոխանակման և միջսահմանային տեղեկատվության փոխանակման համակարգերից օգտվողների թվաքանակ	Կրթության, հետազոտության և զարգացման ոլորտներում շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալների փոխանակման և միջսահմանային տեղեկատվության փոխանակման համակարգերից օգտվողների թվաքանակ	Տարեկան	Առկա չէ	-	-	2021 թ. և 2022 թ. Սևանա լճի և ջրհավաք ավազանի ուսումնասիրության (մոնիտորինգի) գնահատված արդյունքների հասանելի տվյալներ և հաշվետվություն
2.1. Անտառածածկույթի փոփոխությունների հետ կապված խնդիրներ	2) «ՊՈՆՏՈՍ» հարթակի ֆունկցիոնալ							
2.2. Գյուղատնտեսական նպատակով օգտագործվող								

<p>ջրային հաշվեկշռի գնահատում, ջրի արտադրողականության ցուցանիշների և ջրի սակավության ինդեքսների որոշում</p> <p>2.3. Ճահիճների և ճահճային բուսածածկույթի փոփոխությունների գնահատում</p>	<p>հուսալիության ճշգրտության բարձրացում. 3) Սևծովյան տարածաշրջանի երկրների միջև անդրսահմանային համագործակցության, Երկրի դիտարկման գործիքների զարգացում, կիրառում, բնապահպանական ուսումնասիրության (մոնիտորինգի) բարելավում, հանրությանը տեղեկատվության հասանելություն՝ «ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակի միջոցով:</p>	<p>շահառուներին հասանելիություն</p>						
<p>2.4. Քլորոֆիլի և էվտրոֆիկացիայի դինամիկայի համապարփակ գնահատում</p>								
<p>3. Տեղական և ռեգիոնալ դերակատարների ներգրավում տարբեր</p>	<p>Ջրային ռեսուրսների կառավարման և աղտոտման</p>	<p>Կրթության, հետազոտության և զարգացման ոլորտների շահառուներին</p>	<p>Տվյալների բազաներից օգտվողների թվաքանակ</p>	<p>Տարեկան</p>	<p>Առկա չէ</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>2022 թ. ջրային ռեսուրսների կառավարման և</p>

մակարդակներում՝ որպես «ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակի շահառուներ:	կանխարգելման վերաբերյալ տեղական տվյալների բազաների ձևավորում:	տվյալների բազաների տեղեկատվության հասանելություն						աղտոտման կանխարգելման վերաբերյալ տեղական տվյալների հասանելի բազաներ
3.1. Կարիքների գնահատում								

ԲԱԺԻՆ 5

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ (ԿԱՄ) ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրային միջոցառումները	2020-2022 թթ. ակնկալվող արդյունքները	Արդյունքային ցուցիչները և չափման միավորը	Ցուցչի ստուգման եղանակը և աղբյուրը	Տեղեկատվության հավաքագրման պարբերականությունը	Ցուցչի պլանավորված արժեքը (Պ)	Ցուցչի փաստացի արժեքը (Փ)	20 թ. միջոցառումների կատարողականը (Փ)/(Պ)
1	2	3	4	5	6	7	8
1.1. Դասընթացավարների, մասնագետների, երիտասարդ գիտնականների և պրակտիկանտների ուսուցում և	1. Դասընթացավարների, մասնագետների, երիտասարդ գիտնականների և պրակտիկանտների ուսուցում և	Վերապատրաստված դասընթացավարեր, մասնագետներ, երիտասարդ գիտնականներ և պրակտիկանտներ	Մասնակիցների ստորագրված ցանկեր	Տարեկան	35 մասնակից		

<p>վերապատրաստում, որն իրականացվելու է երեք փուլով և ներգրավված են լինելու «ՊՈՆՏՈՍ»-ի բոլոր գործընկերները: Դասընթացների թեմաները կվերաբերեն արբանյակային համակարգերի միջոցով Երկիր մոլորակի դիտարկմանը, ԵՄ-ի կողմից իրականացվող մոնիտորինգի արդյունքում ունեցած ձեռքբերումներին, «Կոպերնիկոս» համակարգին, «ՊՈՆՏՈՍ» հարթակի ստեղծման մեթոդաբանությանը և գործիքներին:</p>	<p>վերապատրաստում, մասնագիտական կարողությունների հզորացում, արբանյակային համակարգերի միջոցով Երկիր մոլորակի դիտարկման հմտությունների տիրապետում:</p>						
<p>1.2. Իրականացվելու է անտառածածկույթի փոփոխությունների հետևանքների որոշում, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության գնահատում: 2009-2021 թթ. կտրվածքով</p>	<p>1. 2009-2021 թվականների կտրվածքով Սևանա լճի և ջրհավաք ավազանի անտառածածկույթի փոփոխությունների՝ նոսրացման (հրդեհների, անտառահատումների և այլնի պատճառով) և աճի դինամիկայի</p>	<p>Առցանց, անվճար և հասանելի արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային ուսումնասիրության (մոնիտորինգի) գնահատված</p>	<p>«ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակից ուսումնասիրության (մոնիտորինգի) տվյալների և հաշվետվության ներբեռնումների թվաքանակ</p>	<p>Տարեկան</p>	<p>100 ներբեռնում</p>		

<p>անտառածածկույթի նոսրացման (հրդեհների, անտառահատումների և այլնի պատճառով) և աճի դինամիկայի ուսումնասիրության (մոնիտորինգի) իրականացում «ՊՈՆՏՈՍ» հարթակով, որը կօգտագործի «Կոպերնիկոս» համակարգը, NASA-ի և USGS-ի տվյալները, ինչպես նաև ազգային արխիվներն ու մոնիտորինգի ծառայությունները: Կիրականացվի Սևանա լճի և ջրհավաք ավազանի արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն, վերլուծություն և ազդեցության գնահատում:</p>	<p>հետևանքների վերաբերյալ ուսումնասիրության (մոնիտորինգի) գնահատված տվյալներ և հաշվետվություն</p>	<p>տվյալներ և հաշվետվություն</p>					
---	---	----------------------------------	--	--	--	--	--

<p>1.3. 2009-2021 թթ. կտրվածքով գյուղատնտեսական նպատակով օգտագործվող ջրային հաշվեկշռի գնահատում, ջրի արտադրողականու- թյան ցուցանիշների և ջրի սակավության ինդեքսների որոշում, տեղումների և գոլորիշացման տվյալների համադրում և ուսումնասիրության (մոնիտորինգի) իրականացում «Կոպեռնիկոս» համակարգի կողմից տրամադրված արբանյակային պատկերների և այլ տվյալների բազաների միջոցով: Կիրականացվի Սևանա լճի և ջրհավաք ավազանի գյուղատնտեսական նպատակով օգտագործվող ջրային հաշվեկշռի, ջրի</p>	<p>1. 2009-2021 թթ. կտրվածքով Սևանա լճի և ջրհավաք ավազանի գյուղատնտեսական նպատակով օգտագործվող ջրային հաշվեկշռի, ջրի արտադրողականության ցուցանիշների և ջրի սակավության ինդեքսների, տեղումների և գոլորիշացման վերաբերյալ ուսումնասիրության (մոնիտորինգի) գնահատված տվյալներ և հաշվետվություններ</p>	<p>Առցանց, անվճար և հասանելի արբանյակային, աշխարհատեղեկա- տվական և դաշտային ուսումնասիրության (մոնիտորինգի) գնահատված տվյալներ և հաշվետվություն</p>	<p>«ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակից ուսումնասիրության (մոնիտորինգի) տվյալների և հաշվետվության ներբեռնումների թվաքանակ</p>	<p>Տարեկան</p>	<p>100 ներբեռնում</p>		
--	--	---	--	----------------	---------------------------	--	--

<p>արտադրողականության ցուցանիշների և ջրի սակավության ինդեքսների արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն, վերլուծություն և ազդեցության գնահատում:</p>							
<p>1.4. 2009-2021 թթ. կտրվածքով ճահիճների մակերեսային ջրերում խոնավության և ճահճային բուսական ծածկույթի փոփոխությունների գնահատում (աճի ինտենսիվություն և այլն), որոնք կապված են օրգանական նյութերի կոնցենտրացիայի հետ: «ՊՈՆՏՈՍ» հարթակը կօգտագործվի ճահիճների և ճահճային բուսածածկույթի փոփոխման դինամիկայի</p>	<p>1. 2009-2021 թթ. կտրվածքով Սևանա լճի և ջրհավաք ավազանի ճահիճների մակերեսային ջրերում խոնավության և ճահճային բուսական ծածկույթի փոփոխությունների (աճի ինտենսիվություն և այլն), ճահիճների և ճահճային բուսածածկույթի փոփոխման դինամիկայի և ջրիմուտների ծաղկման ժամանակահատվածի վերաբերյալ ուսումնասիրության (մոնիտորինգի)</p>	<p>Առցանց, անվճար և հասանելի արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային ուսումնասիրության (մոնիտորինգի) գնահատված տվյալներ և հաշվետվություն</p>	<p>«ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակից ուսումնասիրության (մոնիտորինգի) տվյալների և հաշվետվության ներբեռնումների թվաքանակ</p>	<p>Տարեկան</p>	<p>100 ներբեռնում</p>		

<p>և ջրիմուռների ծաղկման ժամանակահատվածի գնահատման նպատակով: Կիրականացվի Սևանա լճի և ջրհավաք ավազանի ճահիճների և ճահճային բուսածածկույթի փոփոխությունների արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն, վերլուծություն և ազդեցության գնահատում:</p>	<p>գնահատված տվյալներ և հաշվետվություններ</p>						
<p>1.5. Քլորոֆիլի և էվտրոֆիկացիայի դինամիկայի համապարփակ գնահատում: 2009-2021 թթ. կտրվածքով կմշակվեն արբանյակային պատկերներ քլորոֆիլի կոնցենտրացիայի դինամիկան գնահատելու</p>	<p>1. 2009-2021 թթ. կտրվածքով Սևանա լճի և ջրհավաք ավազանի քլորոֆիլի և էվտրոֆիկացիայի դինամիկայի վերաբերյալ ուսումնասիրության (մոնիտորինգի) գնահատված տվյալներ և հաշվետվություններ</p>	<p>Առցանց, անվճար և հասանելի արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային ուսումնասիրության (մոնիտորինգի) գնահատված տվյալներ և հաշվետվություն</p>	<p>«ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակից ուսումնասիրության (մոնիտորինգի) տվյալների և հաշվետվության ներբեռնումների թվաքանակ</p>	<p>Տարեկան</p>	<p>100 ներբեռնում</p>		

<p>համար և որպես ջրի էվտրոֆիկացիայի ցուցիչ՝ օրգանական նյութերով աղտոտվածության ուսումնասիրության (մոնիտորինգի) համար: Կիրականացվի Սևանա լճի և ջրհավաք ավազանի քլորոֆիլի և էվտրոֆիկացիայի դինամիկայի արբանյակային, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն, վերլուծություն և ազդեցության գնահատում:</p>							
<p>1.6. Սեմինարներ և բաց քննարկումներ շահառուների հետ: Գիտելիքների բացերի վերլուծության ռազմավարության կազմում և կարգավորում, ուսումնական նյութերի,</p>	<p>1. Գիտելիքների բացերի վերլուծության մշակված ռազմավարություն: Ծրագրի գործընկերների միջև փոխհամագործակցության խմբի ստեղծում, որը կաջակցի «ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակի մեթոդաբանության և</p>	<p>Միջսահմանային համագործակցության շրջանակներում համատեղ տվյալների և շրջակա միջավայրի ուսումնասիրության (մոնիտորինգի) տվյալների մատչելիության մակարդակ</p>	<p>«ՊՈՆՏՈՍ» օպերացիոն հարթակի գործիքների թվաքանակ</p>	<p>Տարեկան</p>	<p>5 գործիք</p>		

<p>մեթոդական նուղեցույցների մշակում: Ջրային ռեսուրսների կառավարման և աղտոտման կանխարգելման վերաբերյալ տեղական տվյալների բազաների ձևավորմանը մասնակցության ապահովում:</p>	<p>գործիքների միջոցով շահառուներին հասանելի տվյալների ծանոթացմանը, փոխանակմանը և տրամադրմանը: 2. Տեղական և ազգային մակարդակներում կայուն զարգացման համար ջրի որակի վատթարացման կարևորության մասին տեղեկացվածության և իրազեկվածության բարձրացում:</p>					
--	--	--	--	--	--	--

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ